Հավելված
ՀՀ կառավարության 2016 թ.
հուլիսի 21-ի նիստի N 28
արձանագրային որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓԱԽՍՏԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ԱՊԱՍՏԱՆ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Մշակող՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայություն

ԱՄՓՈՓ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

1. Մինչ այժմ Հայաստանում չի վարվել օտարերկրացիների ինտեգրմանն ուղղված հատուկ քաղաքականություն, սակայն, հաշվի առնելով Հայաստան մտնող իմիգրացիոն հոսքերի աճի միտումը, մշակվել է Հայաստանում իմիգրանտների տարբեր խմբերի ինտեգրման խնդիրների լուծման նպատակ հետապնդող քաղաքականության հայեցակարգ:

2. Հայեցակարգն ունի հետևյալ կառուցվածքը՝

Ներածություն

I. Իմիգրացիոն իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում
II. Իմիգրանտների ինտեգրման իրավական նախադրյալները Հայաստանի Հանրապետությունում,
III. Իմիգրանտների ինտեգրման միջազգային փորձը՝ Հայաստանի Հանրապետությունում իմիգրանտների ինտեգրմանն առնչվող խնդիրների լուծման տեսանկյունից
IV. Հայաստանի Հանրապետությունում իմիգրանտների թիրախ խմբերը և նրանց ինտեգրման հետ կապված խնդիրները
V. Առաջարկվող լուծումները և դրանց ֆինանսական գնահատականը

3. Ներածության մեջ տրված է հայեցակարգի նպատակը և Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած, ինչպես նաև երկարաժամկետ միգրանտների ինտեգրման քաղաքականության մշակման անհրաժեշտությունը:

4. Հայեցակարգի առաջին մասում տրված են <իմիգրանտ> և <ինտեգրում> եզրույթների բացատրությունները, ներկայացված է ՀՀ իմիգրացիոն իրավիճակը՝ նկարագրելով ինչպես վերջին մեկ դարում Հայաստանի համար նշանակալի իմիգրացիոն հոսքերը, այնպես էլ վերջին տարիներին Հայաստան մտնող իմիգրացիոն հոսքերը: Վերլուծված են վերջիններս բնութագրող՝ 2010-2015թթ.. ժամանակահատվածն ընդգրկող վիճակագրական տվյալները:

5. Հայեցակարգի երկրորդ մասում անդրադարձ է կատարված Հայաստանի Հանրապետությունում իմիգրանտների ինտեգրմանն առնչվող հարաբերությունների իրավական կարգավորվածության վիճակին հետևյալ ուղղություններով՝ աշխատանքային իրավունքներ, ընտանիքի վերամիավորում, կրթության, բժշկական օգնության հասանելիություն, պետության քաղաքական կյանքին և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը մասնակցություն, սոցիալական ապահովություն, քաղաքացիության տրամադրում, խտրականությունից պաշտպանվածություն:

6. Փաստաթղթի երրորդ մասում վերլուծված է իմիգրանտների ինտեգրման միջազգային փորձը՝ տարբեր երկրներում այդ ուղղությամբ վարվող քաղաքականության ու ծրագրերի հիմնական բաղադրիչներն ու ինտեգրմանն ուղղված կոնկրետ գործողությունները ներկայացնելու միջոցով:

7. Հայեցակարգի չորրորդ մասում վեր են հանված Հայաստանի Հանրապետությունում իմիգրանտների թիրախ խմբերը և նրանց ինտեգրման հետ կապված խնդիրները: Այդ նպատակով գնահատված են ՀՀ-ում բնակության իրավունք ունեցող օտարերկրացիների յուրաքանչյուր խմբի անձանց կարիքները ըստ ինտեգրման 4 բաղադրիչի/ աջակցության տեսակների՝

1) ընդունող երկրի լեզվին տիրապետում,
2) ընդունող երկրի սոցիալ-մշակութային կյանքին ծանոթացում,
3) ընդունող երկրում ժամանակավոր կացարանով ապահովում,
4) ընդունող երկրի աշխատաշուկա մուտք գործում:

8. Փաստաթղթի հինգերորդ մասը նվիրված է ինտեգրման բաղադրիչների իրականացման մեխանիզմներին և դրանց ֆինանսական գնահատականներին:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

9. Բազմաթիվ երկրների համար իրենց մոտ բնակություն հաստատած օտարերկրացիների ինտեգրման խնդիրը համարվում է օրակարգային, և դա պատահական չէ, քանի որ այն բխում է հասարակության համերաշխության և կայունության ապահովման, ինչպես նաև մարգինալ խավերի առաջացումից խուսափելու անհրաժեշտությունից:

10. Նշված հիմնախնդիրն իր արտացոլումն է գտել մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային մի շարք փաստաթղթերում, ինչպիսիք են օրինակ <Փախստականների մասին> 1951թ.-ի ՄԱԿ-ի կոնվենցիան, Եվրոպայում անվտանգության և համագործակցության հարցերով 1994թ. Բուդապեշտյան գագաթաժողովում ընդունված հռչակագիրը, ԵԱՀԿ նախարարաների խորհրդի տասնհինգերորդ հանդիպման ընթացքում (2007թ. մարտին) ընդունված փաստաթղթերը և այլն:

11. Պայմանավորված նրանով, որ 1992-ից ի վեր Հայաստանի հետ կապված արտաքին միգրացիոն հոսքերում բացահայտորեն գերակշռել են էմիգրացիոն հոսքերը, վերջին 20-25 տարիներին իմիգրանտների ինտեգրման խնդիրը մեր երկրում չի դարձել քաղաքական-կառավարչական օրակարգի խնդիր, այդ թվում՝ իմիգրանտների ինտեգրման հատուկ քաղաքականության հայեցակարգային որևէ փաստաթղթի առարկա:

12.Այնուհանդերձ նշված ժամանակաշրջանում Հայաստանը դիմագրավել է նաև հսկայածավալ իմիգրացիոն հոսքերի՝ հանձինս 1988-92թթ.. Ադրբեջանից բռնագաղթված 360.000 փախստականների և ԽՍՀՄ տարբեր տարածքներից Հայաստան ժամանած 60.000 մեր հայրենակիցների, իսկ վերջին 10-12 տարիներին նաև տարբեր երկրներից Հայաստան եկած բավականաչափ մեծ թվով հարկադիր իմիգրանտների, որոնցից ավելի քան 1000–ը Իրաքից, շուրջ 20.000-ը՝ Սիրիայից, ավելի քան 200-ը՝ Ուկրաինայից:

13. Բացի այդ Հայաստանում տարբեր նպատակներով (ընտանիքների վերամիավորում, ուսում, աշխատանք և այլն) բնակություն են հաստատել և հաստատում բազմաթիվ օտարերկրացիներ և դրանով իսկ մեր պետությունը բացառապես էմիգրանտների ծագման երկրից վերածվել է նաև իմիգրանտներ ընդունող երկրի: Այս մասին են վկայում նաև միջազգային կազմակերպությունների կողմից իրականացված հետազոտությունները: Մասնավորապես, 2013թ. ԵԱՀԿ-ի <<Հայաստանում միգրանտների ինտեգրացիայի քաղաքականության գործակցի գնահատման զեկույց>>-ում նշվում է. <Լինելով հիմնականում արտագաղթի երկիր՝ Հայաստանն աստիճանաբար դառնում է նաև ներգաղթի և տարանցման երկիր Անկախ պետությունների համագործակցության և Մերձավոր Արևելքի երկրների համար>:

14. Հայաստանի Հանրապետությունում իմիգրանտների ինտեգրման քաղաքականության հայեցակարգի **նպատակն է** լրացնել ՀՀ միգրացիոն քաղաքականության մեջ առկա բացը՝ սահմանելով իմիգրանտների թիրախ խմբերը և նրանց ինտեգրման հնարավոր ուղղությունները՝ այս ոլորտում առկա միջազգային լավագույն փորձի հաշվառմամբ: Հայեցակարգով **խնդիր է դրվում** որոշակիացնել ինտեգրման հնարավոր օբյեկտները, այսինքն ՀՀ-ում բնակվող իմիգրանտների բոլոր խմբերից որոշակի չափանիշների կիրառմամբ ընտրել Հայաստանի Հանրապետությունում իմիգրանտների ինտեգրման առաջիկա տարիների քաղաքականության նպատակային խմբերը, ինչպես նաև նրանց ցուցաբերվելիք աջակցության հետևյալ տեսակները կամ ինտեգրման բաղադրիչները՝

1) ընդունող երկրի լեզվին տիրապետում,
2) ընդունող երկրի սոցիալ-մշակութային կյանքին ծանոթացում,
3) ընդունող երկրում ժամանակավոր կացարանով ապահովում,
4) ընդունող երկրի աշխատաշուկա մուտք գործում:

15. Հայեցակարգը մշակվել է՝ ելնելով ՀՀ կառավարության 2014 թ. փետրվարի 27-ի N 303-Ն որոշման հավելվածի 83-րդ կետի և ՀՀ կառավարության 2016թ.-ի հունվարի 14-ի N 131-Ն որոշման N1 հավելվածի 41 –րդ

կետի պահանջներից, ըստ որոնց պետք է ՀՀ կառավարություն ներկայացվի «Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև երկարաժամկետ միգրանտների ինտեգրման քաղաքականության հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը:

Ի.ԻՄԻԳՐԱՑԻՈՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

16. Սույն հայեցակարգի իմաստով իմիգրանտ են համարվում ՀՀ-ում բնակություն հաստատած օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, իսկ <ինտեգրում> եզրույթի տակ հասկացվում է օտարերկրացիներին ընդունող երկրի հասարակությունում բնակվելու համար հարմարավետ պայմաններ ստեղծելու և սոցիալական կապեր ձևավորելու նպատակով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների, հասարակության լայն շերտերի համակարգված գործունեությունը: Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ) ինտեգրումը սահմանում է որպես գործընթաց, որի ընթացքում օտարերկրացիները անհատական կարգով և որպես խումբ ընդունվում են հասարակությունում: Տարբեր երկրներում հասարակությունում ընդունելու կոնկրետ պահանջները կարող են էականորեն փոխվել: Ինտեգրման պատասխանատվությունն ընկնում է ոչ միայն կոնկրետ խմբի վրա, այլև այդ գործընթացում ներառված մի քանի կողմերի՝ իմիգրանտների, կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների, ոչ կառավարական կազմակերպությունների և ընդհանրապես ընդունող երկրի ողջ բնակչության վրա:

17. Վերջին մեկ դարում Հայաստանի համար առանձնացվում են իմիգրացիոն նշանակալի հոսքերի մի քանի փուլեր, որոնցից.

1) *առաջինը* 1915-1922թթ. ցեղասպանության հետևանքով հարյուր-հազարավոր հայերի տարերային ներգաղթն էր դեպի ներկայիս Հայաստան, որը 1922 թվականից ստացավ կազմակերպված հայրենադարձության տեսք և շարունակվեց մինչև 1925-1926թվականները:

2)Ներգաղթի *երկրորդ* ինտենսիվ փուլը սկիզբ առավ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, որի արդյունքում ևս մի քանի տասնյակ հազար հայեր ներգաղթեցին Խորհրդային Հայաստան:

3) *Հաջորդ* փուլում՝ անցած դարի 60-70-ական թվականներին հիմնականում նախկին Խորհրդային Միության մի շարք հանրապետություններից (գլխավորապես Ադրբեջանից և Վրաստանից) և Մերձավոր Արևելքի մի շարք երկրներից (Իրանից, Սիրիայից, Լիբանանից, Հորդանանից) տարեկան 12-14 հազար հայազգի իմիգրանտներ էին տեղափոխվում Հայաստան:

4) Դեպի Հայաստան իմիգրացիոն *չորրորդ* մեծ ալիքը կապված էր Լեռնային Ղարաբաղի հիմնահախնդրի շուրջ մեր տարածաշրջանում կտրուկ սրված հակամարտության հետ, որի հետևանքով միայն 1988-1992թթ. Հայաստանը

ստիպված եղավ ընդունել մոտ 360 հազար հայազգի փախստականների Ադրբեջանից և 60.000 մեր հայրենակիցների նախկին ԽՍՀՄ այլ տարածքներից:

18. Վերջին 10-15 տարիներին քիչ թե շատ նշանակալի իմիգրացիոն հոսքեր ի հայտ եկան 2003 թվականից հետո՝ կապված Իրաքում վարվող պատերազմական գործողությունների հետ: Հայաստանը ընդունել է Իրաքից ժամանած ավելի քան 1000 անձանց, ովքեր բոլորն էլ հարկադիր տեղահանվածներ էին (ճնշող մեծամասնությամբ՝ հայազգի), և նրանք Հայաստանում ճանաչվեցին փախստական:

19. 2012թթ. սկսած Հայաստան մտնող իմիգրացիոն հոսքերում սկսեցին գերակշռել արդեն Սիրիայից հարկադիր հեռացած անձինք: Առ այսօր, Հայաստանն ընդունել է այդ երկիրը լքած շուրջ 20.000 անձանց:

20. 2014 թվականից Ուկրաինայի հարավային մասում իրավիճակի սրման հետևանքով Հայաստանում ապաստանի հայց են ներկայացրել 200-ից ավելի Ուկրաինայի քաղաքացիներ:

21. Վերջին տարիներին, սակայն, Հայաստան մտնող իմիգրացիոն հոսքերը չեն սահմանափակվում միայն հարկադիր տեղահանվածներով: Նրանց զուգահեռ, 2010 թվականից սկսած Հայաստանում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կացության մշտական, ժամանակավոր կամ հատուկ կարգավիճակ է ստացել աշխարհի 128 երկրներից ժամանած ավելի քան 34 հազար օտարերկրացի, որոնցից 11,4%-ը ՀՀ-ում ստացել է կացության մշտական կարգավիճակ, մոտ 45,5%-ը՝ ժամանակավոր, իսկ մոտ 43%-ը՝ հատուկ կարգավիճակ: Ընդ որում հարկ է նշել որ մշտական և ժամանակավոր կացության իրավունքն ունեցողների ենթախմբում ակնհայտորեն գերակշռում են տղամարդիկ՝ մոտ 61% (համապատասխանաբար՝ մշտական կարգավիճակ ունեցողների 63.4 և ժամանակավոր կարգավիճակ ունեցողների մոտ 60%-ը):

22. ՀՀ-ում վերջին 5-6 տարիներին կացության մշտական կամ ժամանակավոր կարգավիճակ ստացած օտարերկրացիների համախմբի ճնշող մեծամասնությունը օտարերկրյա պետությունների հայազգի քաղաքացիներն են. օտարազգիները կազմում են ընդամենը 4.2%: Նշված մեծ համախմբում տարբեր դրդապատճառներով Հայաստան ժամանած իմիգրանտների ենթախմբերն ունեն հետևյալ տեսակարար կշիռները՝

<u>1) կրթություն ստանալու նպատակով</u> Հայաստան ժամանած իմիգրանտները՝ մոտ 41%: Այս ենթախմբում իմիգրանտների ծագման 86 երկրների թվում ակնհայտ առաջատարները Իրանն ու Հնդկաստանն են: 2010-2015թթ. ՀՀ-ում կրթություն ստանալու հիմքով կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների թիվը կազմել է 13084 անձ:

<u>2) ընտանիքի հետ վերամիավորման նպատակով</u> ժամանածները՝ 30.1%: Այս ենթախմբում իմիգրանտների ծագման ավելի քան 80 երկրների թվում ակնհայտ առաջատար երկիրը ՌԴ-ն է: 2010-2015թթ. ՀՀ-ում ընտանիքի հետ վերամիավորման հիմքով ժամանակավոր և մշտական կացության կարգավիճակներ ստացած օտարերկրացիների թիվը կազմել է 6599 անձ:

<u>3) աշխատանքային գործունեություն ծավալելու նպատակով</u> ժամանածները՝ 23.7%: Այս ենթախմբում իմիգրանտների ծագման 100 երկրների թվում ակնհայտ առաջատարը Իրանն է: 2010-2015թթ. ՀՀ-ում աշխատանք գտնելու հիմքով

ժամանակավոր և մշտական կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների թիվը կազմել է 5904 անձ:

4) գործարարությամբ զբաղվելու նպատակով Հայաստան ժամանածները՝ 0.17%: Այս փոքր ենթախմբում իմիգրանտների ծագման 12 երկրների թվում բացարձակ առաջատարը կրկին Իրանն է: 2010-2015թթ ՀՀ-ում գործարարության հիմքով ժամանակավոր և մշտական կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների թիվը կազմել է ընդամենը 83 անձ:

23. 2011-2015թթ.. Հայաստանում կացության հատուկ կարգավիճակ ստացած 15781 իմիգրանտների ծագման շուրջ 70 երկրների խմբում ակնհայտ առաջատարներ են Իրանը, Սիրիան և ԱՄՆ-ը: Ավանդականորեն հայկական մեծ գաղթոջախներ ունեցող այս երեք երկրներին բաժին է ընկնում Հայաստանում կացության հատուկ կարգավիճակ ստացածների մոտ 68%-ը:

24. Իսկ 2016թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ-ում կացության վավեր կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացիների վիճակագրությունը հետևյալն է՝

1) Վավեր ժամանակավոր կացության կարգավիճակ ունեն 3736 անձինք որոնցից 663-ը ընտանիքի հետ միավորման, 1705-ը՝ ուսման, 1277-ը՝ աշխատանքի և 50-ը՝ ազգությամբ հայ լինելու հիմքերով:

2) Վավեր մշտական կացության կարգավիճակ ունեն 4709 անձինք որոնցից 3781-ը առնվազն 3 տարի Հայաստանում բնակվելու, 21-ը՝ ձեռնարկատիրական գործունեության, 907-ը ազգությամբ հայ լինելու հիմքերով:

3) Վավեր հատուկ կացության կարգավիճակ ունեն 8705 անձինք որոնցից 53-ը տնտեսական կամ մշակութային գործունեության, իսկ 8652-ը ազգությամբ հայ լինելու հիմքերով:

II. ԻՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

25. Իմիգրանտների ինտեգրացիայի մասին խոսելիս պետք է նկատի ունենալ առնվազն երկու հարթություն.

1) Ինտեգրում իրավական հարթությունում, որը ցույց է տալիս, թե օրենսդրական մակարդակում ինչ հարաբերության մեջ են ընդունող երկրի, տվյալ դեպքում՝ ՀՀ քաղաքացիների և իմիգրանտների իրավունքներն ու պարտականությունները,

2) Ինտեգրում փաստացի մակարդակում, որը ցույց է տալիս, թե փաստացի մակարդակում որքանով է ընթանում իմիգրանտների ինտեգրումը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, այդ թվում որքանով են իրացվում օրենսդրությամբ նրանց համար սահմանված իրավունքներն ու պարտականությունները:

26. Օտարերկրացիների ինտեգրման իրավական նախադրյալների ամբողջական ներկայացման տեսանկյունից կարևոր է ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում իմիգրանտների ինտեգրմանն առնչվող հարաբերությունների իրավական կարգավորվածության վիճակի վերլուծությունը՝ հետևյալ ուղղություններով կամ ոլորտներում՝

1) աշխատանքային իրավունքների իրականացման ու հասանելիության,
2) ընտանիքի վերամիավորման,
3) կրթության մատչելիության,
4) բժշկական օգնության հասանելիության,
5) պետության քաղաքական կյանքին և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը մասնակցության,
6) կացության, այդ թվում՝ սոցիալական ապահովության,
7) քաղաքացիության տրամադրման,
8) խտրականությունից պաշտպանվածության

Օտարերկրացիների աշխատանքային իրավունքների իրականացումն ու հասանելիությունը Հայաստանի Հանրապետությունում

27. ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված են ֆիզիկական անձանց՝ ՀՀ քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց աշխատանքային իրավունքների և ազատությունների պետական երաշխիքները: ՀՀ օրենսդրությունը, անկախ անձի քաղաքացիությունից, աշխատանքի ընդունվելու հարցում ՀՀ քաղաքացիների և օտարերկրացիների համար հավասար պայմաններ է նախատեսում՝ բացառությամբ որոշ ոլորտների (զինված ուժեր, իրավապահ մարմիններ և այլն):

28. Օտարերկրացիների աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են նաև «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով, որի համաձայն օտարերկրացիներն իրավունք ունեն ազատորեն տնօրինելու իրենց աշխատանքային ունակությունները, ընտրելու մասնագիտության և գործունեության տեսակը, զբաղվելու ՀՀ օրենսդրությամբ չարգելված տնտեսական գործունեությամբ՝ պահպանելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված սահմանափակումները: Չնայած ՀՀ օրենսդրությամբ օտարերկրացիների աշխատանքի համար նախատեսվում է աշխատանքի թույլտվության ձեռքբերում (բացառությամբ մի քանի իրավիճակների), գործնականում, սակայն դրա ապահովման համար անհրաժեշտ ընթացակարգերը դեռևս գտնվում են մշակման փուլում:

29.«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով սահմանվում է, որ ամուսնությունը ՀՀ քաղաքացիների կամ ՀՀ-ում օրինական հիմքերով բնակվող օտարերկրյա քաղաքացիների հետ ժամանակավոր կացության կարգավիճակ տալու հիմքերից մեկն է, որի շնորհիվ երկու ամուսինները ձեռք են բերում Հայաստանի աշխատաշուկա ազատ, այսինքն առանց աշխատանքի թույլտվության մուտք գործելու հնարավորություն:

30.Աշխարհի երկրների մեծ մասում բարձր որակավորում ունեցող աշխատողների համար սահմանված են աշխատաշուկա մուտք գործելու արտոնյալ

պայմաններ: Նման արտոնություններ են սահմանվում նաև միջազգային իրավական տարբեր փաստաթղթերով, Հայաստանը նույնպես այդ խմբի համար նախատեսում է արտոնյալ ռեժիմ՝ բարձր որակավորում ունեցող աշխատողներին ազատելով աշխատանքի թույլտվություն ձեռք բերելքու պահանջից:

31.Միևնույն ժամանակ որևէ պետական մարմնի վրա դրված չէ օտարերկրացիներին ներգաղթի պայմանների և աշխատանքային շուկայի հնարավորություններից օգտվելու, աշխատանքային իրավունքների, սոցիալական ապահովության հասանելիության, խտրականության դեմ պայքարի և այլնի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու պարտականություն:

32.Աշխատող միգրանտների ինտեգրման համար անհրաժեշտ նախապայմաններից մեկը, որը նույնպես օրենսդրորեն դեռ կարգավորված չէ, հայերենի դասընթացների կազմակերպումն է՝ նկատի ունենալով այն, որ լեզվի իմացությունը իմիգրանտների ինտեգրման, այդ թվում՝ աշխատանքային ինտեգրման առանցքային գործիքներից է:

Օտարերկրացիների ընտանիքների միավորման հարաբերությունների կարգավորվածությունը, իրականացումն ու հասանելիությունը Հայաստանի Հանրապետությունում

33. Մարդու՝ ամուսնանալու ու ընտանիք կազմելու իրավունքը, որը միջազգային իրավունքի հանրաճանաչ փաստաթղթերով դասվել է մարդու հիմնարար իրավունքների շարքը, իր արտացոլումն է գտել ՀՀ ազգային օրենսդրությունում: Մասնավորապես, «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ընտանիքի վերամիավորումը սահմանված է որպես Հայաստանի Հանրպետություն այցելության մուտքի վիզա տրամադրելու հիմքերից մեկը:

34.Օտարերկրացիները ամուսնության, ամուսնալուծության և ընտանիք կազմելու առումով ունեն ՀՀ քաղաքացիներին հավասար իրավունք: Որոշակի սահմանափակումներ են կիրառվում միայն օտարերկրացու կողմից երեխաների որդեգրման իրավունքի մասով՝ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից որդեգրումը թույլատրելով միայն ՀՀ տարածքում մշտապես ապրող ՀՀ քաղաքացիների ընտանիքում դաստիարակության հանձնելու կամ երեխաներին իրենց ազգականների կողմից որդեգրելու անհնարինության դեպքերում:

35.ՀՀ տարածքում օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ամուսնությունը կնքվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ օտարերկրյա քաղաքացիների՝ ՀՀ տարածքում օտարերկրյա պետությունների հյուպատոսական հիմնարկներում կնքված ամուսնությունը ՀՀ-ում վավերական է փոխադարձության պայմաններով:

36.Նմանօրինակ ձևով է լուծվում նաև ամուսնալուծությունների հարցը: ՀՀ քաղաքացիների և օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց միջև, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների միջև ամուսնության լուծումը ՀՀ տարածքում կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: ՀՀ քաղաքացիների կամ ՀՀ քաղաքացիների և օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների

ամուսնալուծությունը, որը կատարվել է ՀՀ տարածքից դուրս՝ պահպանելով այն պետության օրենսդրությունը, որի տարածքում այն կնքվել է, ՀՀ-ում վավեր է հյուպատոսական օրինականացման առկայության դեպքում:

37.Օտարերկրացիների ընտանիքների վերամիավորման գործընթացն առանձին կարգավորում չունի ՀՀ օրենսդրության մեջ, բացառությամբ փախստականների և ապաստան հայցողների, ում վերաբերյալ կարգավորումը նախատեսված է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքով, համաձայն որի Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականները իրավունք ունեն վերամիավորվելու իրենց ընտանիքի անդամներին Հայաստանի Հանրապետության տարածքում՝ օրենքով սահմանված ընթացակարգի համաձայն:

Կրթական համակարգից օտարերկրացիների օգտվելու իրավունքի կարգավորվածությունը Հայաստանի Հանրապետությունում

38.ՀՀ Սահմանադրության համաձայն՝ յուրաքանչյուր ոք (այդ թվում՝ իմիգրանտները՝ անկախ էթնիկական, ռասայական պատկանելությունից, սեռից, լեզվից, կրոնից և քաղաքական կամ այլ հայացքներից) ունի կրթության իրավունք: Ընդ որում հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, իսկ միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում՝ անվճար:

39.«Նախադպրոցական կրթության մասին» և «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքներում որևէ առանձնահատկություն օտարերկրացիների վերաբերյալ նախատեսված չէ և նրանք այդ կրթությունը ստանում են ՀՀ քաղաքացիների հետ հավասար հիմունքներով: Իսկ «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքով արգելվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում սովորող Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած ծագումով հայ քաղաքացիների, ինչպես նաև ծագումով հայ այն օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ, որոնց մշտական բնակության օտարերկրյա պետությունում ստեղծվել է քաղաքացիների կյանքին կամ առողջությանը սպառնացող արտակարգ իրավիճակ, կիրառել ուսման վարձավճարի ավելի բարձր չափ, քան սահմանված է տվյալ ուսումնական հաստատության համանման պայմաններում սովորող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նկատմամբ:

40.Կրթական ինտեգրացիայի (որը միևնույն ժամանակ հանդիսանում է անձի սոցիալ-մշակութային ինտեգրացիայի համար կարևորագույն պայմաններից մեկը) առումով ՀՀ օրենսդրությունում առկա է կարևորագույն մի բաց. մասնավորապես, որևէ օրենքով կամ իրավական ակտով կարգավորված չէ օտարերկրացիների համար հայերեն լեզվի ուսուցման դասընթացների կազմակերպման խնդիրը: Բացի այդ, թեև Հայաստանում ուսումնառությունը նշվում է որպես օտարերկրացիների՝ մեր երկրում կացության օրինական կարգավիճակ ստանալու հիմքերից մեկը, այնուամենայնիվ, թույլտվության համար պայմաններն ու չափորոշիչները հստակ սահմանված չեն: Ավելին, օրենսդրորեն ամրագրված չեն նաև օտարերկրացի

ուսանողների համար աշխատաշուկայից օգտվելու հնարավորությունները, ինչն ինտեգրման անհրաժեշտ պայմաններից մեկն է:

Բժշկական օգնությունից օտարերկրացիների օգտվելու իրավունքի կարգավորվածությունը Հայաստանի Հանրապետությունում

41.ՀՀ Սահմանադրության համաձայն՝ յուրաքանչյուր ոք, այդ թվում՝ օտարերկրացին ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք: Սահմանադրությունը նաև սահմանում է, որ յուրաքանչյուր ոք՝ ներառյալ օտարեկրացին ունի անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունք, որոնց ցանկը և մատուցման կարգը սահմանվում են օրենսդրությամբ:

42.ՀՀ-ում փախստականի և ապաստան հայցողի կարգավիճակ ունեցող անձանց համար այդ կարգը սահմանված է ՀՀ կառավարության 2006թ. մարտի 30-ի թիվ 420-Ն որոշման Հավելված 1-ով, որի համաձայն ՀՀ-ում փախստականի և ապաստան հայցողի կարգավիճակ ունեցող յուրաքանչյուր անձ պետական պատվերի շրջանակներում ստանում է պետության կողմից երաշխավորված անվճար առողջության առաջնային պահպանման ծառայություններ՝ որոշմամբ սահմանված կարգին համապատասխան:

Պետության քաղաքական կյանքին և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասնակցությանն առնչվող հարաբերությունների իրավական կարգավորման վիճակը Հայաստանի Հանրապետությունում

43.Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացիների մասնակցությունը պետության քաղաքական կյանքին և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը կարգավորված է մասամբ: Մասնավորապես ՀՀ ընտրական օրենսգրքով Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք է տրված ընտրությունն անցկացվող համայնքի բնակչության ռեգիստրում մինչև քվեարկության օրն առնվազն վեց ամսվա հաշվառում ունենալու դեպքում:

44.Իսկ օրինակ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում որևէ դրույթ օտարերկրացիների մասին նախատեսված չէ, իսկ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կուսակցություն չի կարող ճանաչվել այն միավորումը, որի կանոնադրությունը թույլատրում է նրանում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, բացառությամբ նույն օրենքով նախատեսված դեպքերի, ինչպես նաև օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների անդամակցությունը: Նույն օրենքի համաձայն՝ կուսակցությանը չի թույլատրվում նվիրատվություններ ստանալ օտարերկրյա պետություններից, օտարերկրյա քաղաքացիներից ու իրավաբանական անձանցից, ինչպես նաև օտարերկրյա մասնակցությամբ իրավաբանական անձանցից, եթե օտարերկրյա մասնակցի բաժնետոմսերը, փայը, բաժնեմասը տվյալ

իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք, փայահավաք) կապիտալում 30 տոկոսից ավելին է: Ընդ որում, այս օրենքը որևէ բացառություն ՀՀ-ում բնակվող, ներառյալ՝ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների վերաբերյալ չի նախատեսում:

Կացության իրավունքի իրացման հետ առնչվող հարաբերությունների իրավական կարգավորվածության վիճակը Հայաստանի Հանրապետությունում

45.Կացության իրավունքի իրացման հետ կապված բոլոր իրավական կարգավորումները սահմանված են «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով և օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերով: Այսպես, օրենքով սահմանված են ՀՀ-ում օտարերկրացիներին տրամադրվող կացության երեք կարգավիճակները, դրանց տրամադրման հիմքերը և ժամկետները, կարգավիճակ ստանալու համար դիմումի ներկայացման,կարգավիճակ ունեցող օտարերկացիների հաշվառման կարգը, կացության կարգավիճակ տալը մերժելու հիմքերը և այլ հարցեր:

46. <Փախստականների և ապաստանի մասին> ՀՀ օրենքով կարգավորված են ՀՀ-ում կացության իրավունք ունեցող օտարերկրացիների մեկ այլ խմբի՝ ՀՀ-ում ապաստան հայցող և ապաստան ստացած ու փախստական ճանաչված անձանց հետ կապված իրավահարբերությունները:Օրենքով սահմանված են այն չափանիշները, որոնց հիման վրա անձինք կարող են համարվել ապաստան հայցող և փախստական, ապաստանի տրամադրման ընթացակարգը, ապաստանի տրամադրումը զանգվածային ներհոսքի դեպքում, փախստականի կարգավիճակի բացառման և ապաստան տրամադրելու մերժման հիմքերը և այլն:

47.ՀՀ օրենսդրությամբ իրավական կարգավորումներ են նախատեսված նաև ՀՀ-ում կացության օրինական կարգավիճակ չունեցող, սակայն խոցելի վիճակում գտնվող օտարերկրացիների առանձին խմբերի համար: Այսպես, «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքով թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց տրամադրվում է մտորման ժամկետ, որն այն ժամանակահատվածն է, որով իրավունք և հնարավորություն է ընձեռվում թրաֆիքինգի և շահագործման ենթարկված օտարերկրացի հավանական զոհին, զոհին և հատուկ կատեգորիայի զոհին, անկախ կացության կարգավիճակի օրինականությունից, մնալ ՀՀ տարածքում, ձերբազատվել իրենց թրաֆիքինգի ենթարկած կամ շահագործած անձանց ազդեցությունից, վերականգնվել պատճառված ֆիզիկական վնասվածքների հետևանքներից, ինչպես նաև կայացնել սթափ և կշռադատված որոշումներ: Օրենքով արգելվում է ՀՀ-ում գտնվող օտարերկրացուն մտորման ժամկետի ընթացքում արտաքսելը կամ նրան ՀՀ-ում առանց վավերական արտոնագրի կամ կացության կարգավիճակի կամ անվավեր փաստաթղթերով նշված ժամանակահատվածում բնակվելու համար պատասխանատվության ենթարկելը:

Օտարերկրացիներին Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիության տրամադրման հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորվածության վիճակը

48.«ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքով սահմանված են ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու հիմքերը, քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև անհայտ քաղաքացիություն ունեցող կամ իրենց քաղաքացիությունը երեխային փոխանցելու հնարավորություն չունեցող անձանց ՀՀ-ում ծնված երեխաների կողմից ՀՀ քաղաքացիության ձեռքբերման ընթացակարգը:

49. Նույն օրենքի համաձայն ՀՀ քաղաքացիություն ստանալու համար իրավունք ունի դիմել ՀՀ քաղաքացիություն չունեցող 18 տարին լրացած, գործունակ, օտարերկրյա պետությունում բնակվող (գտնվող) կամ ՀՀ-ում օրինական հիմքով բնակվող (գտնվող) յուրաքանչյուր անձ, եթե նա միաժամանակ բավարարում է հետևյալ պահանջներին՝ օրենքով սահմանված կարգով վերջին երեք տարիներին մշտապես բնակվել է ՀՀ-ում, կարող է բացատրվել հայերեն լեզվով, ծանոթ է ՀՀ Սահմանադրությանը: Օրենքով նաև սահմանված են առանց նշված երեք պահանջների պահպանման ՀՀ քաղաքացիություն ստանալու դեպքերը:

50. ՀՀ քաղաքացիություն հայցող անձը քաղաքացիություն ստանալու դիմումն անձամբ պետք է ներկայացնի ՀՀ կառավարության լիազոր մարմնին: ՀՀ քաղաքացիություն ստանում են քաղաքացիություն շնորհելու մասին ՀՀ Նախագահի հրամանագրով: ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումը մերժվում է, եթե տվյալ անձն իր գործունեությամբ վնասում է պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունը և բարքերը, այլոց իրավունքներն և ազատությունները, պատիվն և բարի համբավը: ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումի մերժումը կարող է չհիմնավորվել:

Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացիների խտրականությունից պաշտպանվածության ապահովմանն առնչվող հարաբերությունների իրավական կարգավորվածության վիճակը

51.Օտարեկրացիների մարդու հիմնարար իրավունքների իրացման տեսանկյունից ՀՀ օրենսդրությունը որևէ խտրականություն չի նախատեսում: Օրինակ օտարերկրացիները իրենց խախտված իրավունքների վերականգնման նպատակով կամ ցանկացած այլ բողոքով ՀՀ քաղաքացիներին համահավասար կարող են դիմել դատարան՝ քաղաքացիական, քրեական և վարչական գործերով: Այլ հարց է, որ պետական լեզվին չտիրապետելու հետ կապված առաջանում են այդ իրավունքի իրացման հետ կապված որոշակի բարդություններ: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն, գործին մասնակցող անձինք իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովվում է հայերեն թարգմանությունը կամ եթե անձը համաձայն է վճարել դատարանի կողմից նշանակված թարգմանչի ծառայությունների համար: Այսինքն, իր մայրենի լեզվով հանդես գալու դեպքում օտարերկրացու վրա է դրված թարգմանության ապահովումը:

52.Համանման դրույթ է պարունակում նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը. կողմը, նրա ներկայացուցիչը, կամ նրա նախաձեռնությամբ նշանակված փորձագետը կամ հրավիրված վկան իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե կողմն ապահովում է հայերեն թարգմանությունը: Դատավորը, կողմերը, վկաները, փորձագետները, ներկայացուցիչներն իրավունք չունեն ստանձնելու թարգմանչի պարտականություններ, անգամ եթե նրանք տիրապետում են թարգմանության համար անհրաժեշտ լեզվին:

53.Միայն վարչական դատավարության ընթացքում է առկա պետության հաշվին թարգմանիչ ներգրավվելու հնարավորություն, այն էլ միայն այն դեպքում, երբ դատավարության կողմ հանդիսացող օտարերկրացին ապացուցում է, որ բավարար միջոցներ չունի վճարովի թարգմանություն ապահովելու համար:

54.ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ, քրեական դատավարության լեզվին չտիրապետող քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական միջոցների հաշվին հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իրենց իրավունքները:

55.Այս առումով առկա է օտարերկրացիներին՝ դատական և արտադատական կարգով իրենց իրավունքների պաշտպանության վերաբերյալ տեղեկատվության տրամադրման որոշակի պակաս, մասնավորապես, իրենց հասկանալի լեզվով: Այսինքն, թեև պաշտպանվածությունը, ներառյալ՝ դատական կարգով, ձևականորեն սահմանված է ՀՀ գործող օրենսդրությամբ, փաստացի այն կարող է անիրատեսական լինել կամ չիրականացվել հայերեն լեզվին չտիրապետելու կամ թարգմանիչ վարձելու ֆինանսական հնարավորության բացակայության հետևանքով:

56. Ամփոփելով կարելի է արձանագրել հետևյալը՝

1) որևէ պետական մարմնի վրա դրված չէ օտարերկրացիներին ներգաղթի պայմանների և աշխատանքային շուկայի հնարավորություններից օգտվելու, աշխատանքային իրավունքների, սոցիալական ապահովության հասանելիության, խտրականության դեմ պայքարի և այլնի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու պարտականություն;

2) կրթական ինտեգրացիայի (որը միևնույն ժամանակ հանդիսանում է անձի սոցիալ-մշակութային ինտեգրացիայի համար կարևորագույն պայմաններից մեկը) առումով ՀՀ օրենսդրությունում առկա է կարևորագույն մի բաց, մասնավորապես, որևէ օրենքով կամ իրավական ակտով կարգավորված չէ օտարերկրացիներիի համար հայերեն լեզվի ուսուցման դասընթացների կազմակերպման խնդիրը: Բացի այդ, թեև Հայաստանում ուսումնառությունը նշվում է որպես օտարերկրացիների՝ մեր երկրում կացության օրինական կարգավիճակ ստանալու հիմքերից մեկը, այնուամենայնիվ թույլտվության համար պայմաններն ու չափորոշիչները հստակ սահմանված չեն;

3) Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացիների մասնակցությունը պետության քաղաքական կյանքին և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը կարգավորված է մասամբ;

4) կացության իրավունքի իրացման հետ կապված բոլոր իրավական կարգավորումները սահմանված են, ավելին, առկա է առանձին կարգավորում օրինական կարգավիճակ չունեցող, սակայն խոցելի իրավիճակում գտնվող անձանց համար;

5) օտարերկրացիներին ՀՀ քաղաքացիության տրամադրման բոլոր կարգավորումները առկա են;

6) Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացիները պաշտպանված են խտրականությունից, սակայն առկա է օտարերկրացիներին՝ դատական և արտադատական կարգով իրենց իրավունքների պաշտպանության վերաբերյալ տեղեկատվության տրամադրման որոշակի պակաս, մասնավորապես, իրենց հասկանալի լեզվով:

57. Առանձին պետք է նշել, որ բոլորովին վերջերս՝ 2015թ. դեկտեմբերի 16-ին ընդունված ««Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով պետությունը ստանձնել է օտարերկրացիների մի խմբի՝ ՀՀ-ում փախստականի կարգավիճակ ստացած անձանց հասարակության մեջ ինտեգրմանն ուղղված միջոցառումների իրականացման պարտավորություն: Այդ միջոցառումները իրենց մեջ ներառելու են լեզվի և մշակութային դասընթացներ, առօրյա կյանքին վերաբերող տեղեկությունների տրամադրում, հանրային կյանքին մասնակցություն և այլն:

III. ԻՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

58.Իմիգրանտների ինտեգրման տարբեր երկրներում գործող համակարգերի վերլուծության արդյունքում ստորև ամփոփ կերպով ներկայացվում են այդ ուղղությամբ վարվող քաղաքականության ու ծրագրերի հիմնական բաղադրիչներն ու ինտեգրմանն ուղղված կոնկրետ գործողությունները:

59.Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա են օժանդակության տրամադրման երկու հիմնական մոտեցումներ՝ **թիրախային**, երբ իմիգրանտը դիտարկվում է որպես առանձնացված սոցիալական խումբ, և **ներառական**, երբ իմիգրանտների խնդիրների լուծումն իրականացվում է վարվող ընդհանուր քաղաքականության և ծրագրերի շրջանակներում:

60.Ուսումնասիրված երկրներից միայն մի քանիսում է, որ ինտեգրմանն ուղղված օժանդակությունն իրականացվում է բացառապես առկա ծառայությունները իմիգրանտներին հասանելի դարձնելու միջոցով: Նման մոտեցում է կիրառվում Իսպանիայում, Իռլանդիայում և Բելգիայում (Wallonia): Այս մոտեցմամբ իմիգրանտներին ինտեգրող երկրներում անձի փախստական ճանաչվելու պահից նրա համար հասանելի են դառնում սեփական քաղաքացիների համար գոյություն ունեցող ծառայությունները:

61.Իմիգրանտների ինտեգրման քաղաքականություն վարող երկրներում առավել տարածված է իմիգրանտներին թիրախային օժանդակության տրամադրման մոտեցումը, ինչը նախատեսում է նրանց որոշակի ժամկետի ընթացքում աջակցության տրամադրում: Ընդ որում, այդ ժամկետը ըստ երկրների տարբերվում է (Ֆրանսիայում՝ 1 տարի, Նորվեգիայում՝ 2 տարի, Դանիայում՝ 3 տարի և այլն): Նման օժանդակություն այս կամ այն ձևով տրամադրվում է Ավստրիայում, Բելգիայում (Flanders), Դանիայում, Ֆինլանդիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Նիդերլանդներում, Նորվեգիայում, Սլովենիայում, Միացյալ Թագավորությունում և որոշ չափով Շվեցարիայում: Թիրախային մոտեցում կիրառող երկրների համար բնորոշ է ինտեգրման ծրագրերի առկայությունը, որոնք արտացոլվում են ինտեգրման անհատական պլաններում:

62.Ինտեգրման անհատական պլանը ստորագրվում է այդ հարցերով իրավասու պետական մարմնի և անհատի միջև և նախատեսում է սահմանված ժամկետի ընթացքում թիրախային օժանդակության տրամադրում: Ինտեգրման պլանները կարելի է դասակարգել 3 հիմնական խմբերի՝

1)Ստանդարտ. Այս պլանով սահմանվում են իմիգրանտի պարտավորությունները իր իսկ ինտեգրման գործընթացի իրականացման ընթացքում, ինչպես նաև պետության կողմից նրան առաջարկվող մի շարք միջոցառումներ: Նման ստանդարտ պլաններ օգտագործվում են, օրինակ, Ֆրանսիայում:

2)Իմիգրանտի անհատական կարիքների գնահատման հիման վրա կազմված. Ուսումնասիրված երկրներից այս տեսակի պլաններ կիրառվում են Բելգիայում (Flanders),Դանիայում, Ֆինլանդիայում, Գերմանիայում, Նիդերլանդներում, Անգլիայում: Սոցիալական աշխատողի հետ հարցազրույցի հիման վրա կազմվում է պլան, որը սահմանում է այն նպատակները, որոնց իմիգրանտը պետք է հասնի: Իշխանությունները, հիմնականում տեղական մարմինների մակարդակով, տարբեր ձևերով օժանդակություն են տրամադրում իմիգրանտներին իրենց համար սահմանված ինտեգրման նպատակներին հասնելու համար, ինչը ամրագրվում է այս պլանների մեջ: Չնայած որ պլանները կարող են տարբերվել ըստ առանձին իմիգրանտների,այդուհանդերձ լեզվական դասընթացներին մասնակցությունը սովորաբար կազմում է պլանի պարտադիր մասը:

3)Ինտեգրման կենտրոնում ստորագրված. Պլանների այս տեսակը կիրառվում է Ավստրիայում, այն ստորագրվում է ինտեգրման կենտրոնում փախստականների բնակեցման ընթացքում, քանի որ պլանի ստորագրումը պարտադիր պայման է ինտեգրման կենտրոնում տեղավորվելու համար: Պլանում ի թիվս այլ կետերի սահմանվում է, որ անձը պատրաստակամ է ինտեգրվել, ակտիվորեն մասնակցել լեզվի ուսուցման դասընթացներին և աշխատանք փնտրել: Իմիգրանտներին օժանդակությունը տրամադրվում է բուն ինտեգրման կենտրոնում՝ ներառյալ լեզվի ուսուցման դասընթացները, սոցիալական ծառայությունները, աշխատանք փնտրելու օժանդակությունը:

Ինտեգրման ծրագրեր ըստ երկրների

63. Ինչ վերաբերում է ինտեգրման անհատական պլանների իրականացման ժամկետներին, իրականացվող ծրագրերին կամավոր կամ պարտադիր, վճարովի կամ անվճար մասնակցության հարցերին, ապա դրանք տարբերվում են երկրից երկիր՝

1) Ֆրանսիայում իմիգրանտի հետ կնքվող ինտեգրման անհատական պլանները պարտադիր են դարձել 2007 թվականից և Ֆրանսիական ինտեգրման համակարգի կարևոր մասն են կազմում: Դրանք ստորագրվում են մեկ տարով՝ ևս մեկ տարով երկարաձգելու հնարավորությամբ: Դրանց միջոցով իմիգրանտների համար առաջին հերթին իրականացվում են ֆրանսերենի և Ֆրանսիայի սոցիալ-մշակութային կյանքի, հասարական-պետական կառուցվածքի մասին պատկերացումներ տվող դասընթացներ:

2) Բելգիայում (Flanders) ինտեգրման պլանի իրականացումը սկսվում է գրեթե ժամանման պահից և դրանում նշված պայմանների չկատարումը առաջացնում է որոշակի տույժեր, օրինակ՝ հետագայում սոցիալական բնակարան տրամադրվում է միայն այն անձանց, ովքեր ունեն լեզվական զգալի առաջընթաց: Բացի դրանից նոր ժամանած իմիգրանտներին իրավունք է տրվում աշխատելու միմիայն լեզվի ուսուցման, քաղաքացիական կողմնորոշման և աշխատաշուկայի հետ ծանթացման դասընթացները ավարտելուց հետո: Բացառություն է արված միայն փախստականների համար, ովքեր իրավունք ունեն աշխատել նաև մինչև դասընթացներն անցնելը: Ինչպես Ֆրանսիայում, այստեղ ևս ինտեգրման պլանը պետք է կատարվի մեկ տարում:

3) Դանիայում 2006թ-ից սկսած այս երկիր մուտք գործող իմիգրանտների համար պարտադիր է դարձել <Դանիական հասարակությունում ինտեգրման և ակտիվ քաղաքացիության մասին> հռչակագրի և ինտեգրման պլանի ստորագրումը: Հռչակագիրը պարունակում է ժողովրդավարական արժեքների պահպանման և հարգման պահանջներ, ինչպես նաև դանիերեն սովորելու և դանիական հասարակության վերաբերյալ գիտելիքների ձեռքբերման պարտավորություններ: Ինտեգրման անհատական պլանը փախստականների դեպքում նախատեսված է 3 տարվա համար, ստորագրվում է տեղական կառավարման մարմնի և փախստականի միջև՝ փախստականի կարգավիճակ ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում: Ինտեգրման պլանը մշտապես վերանայվում է և կարող է լրամշակվել փոփոխվող հանգամանքներին համապատասխան:

4) Նիդերլանդներում ինտեգրմանն ուղղված միջոցառումները սկսվում են մինչև երկիր ժամանելը. ժամանակավոր բնակության իրավունքի ստացման նախապայման է համարվում ինտեգրացիոն թեստի լրացումը: Իսկ մշտական բնակության իրավունք ստանալու համար անհրաժեշտ է հոլանդերենի և երկրի մշակույթի իմացության վերաբերյալ քննություն հանձնել: Նոր ժամանած իմիգրանտին որևէ կոնկրետ օկրուգում բնակեցնելուց հետո, եթե անձը ինտեգրման միջոցառումներին մասնակցելու կարիք ունի, տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մշակվում է շահառուի կարիքներին հարմարեցված ինտեգրման

ծրագիր և իմիգրանտի հետ կնքվում է այդ ծրագրի իրականացման պայմանագիր՝ պարտավորեցնելով իմիգրանտին կիսամյակը մեկ հաշվետվություն տալ ինտեգրման ուղղությամբ իր առաջընթացի մասին: Նոր ժամանած իմիգրանտները պետք է որոշակի գումար վճարեն ինտեգրման ծրագրին մասնակցելու համար, սակայն փախստականների համար մասնակցությունն անվճար է:

5) Նորվեգիայում ինտեգրման ծրագիրը պարտադիր է նոր ժամանած իմիգրանտների համար: Որպես այս ծրագրի մի մաս՝ մշակվում է անհատական պլան, որտեղ հիմնական շեշտը դրվում է հիմնական հմտությունների ուսուցման վրա (basic skills training), որն իրականացվում է կարգավիճակ ստանալուց հետո 3 ամսվա ընթացքում: Ինտեգրման պլանը մշակվում է 2 տարով, բայց կարող է երկարացվել ևս մեկ տարով կարիքն առաջանալու դեպքում: Ինտեգրման ծրագրին մասնակցելու համար փախստականներին տրվում է այսպես կոչված «ներածական» նպաստ:

6) Միացյալ Թագավորությունում կարգավիճակը ստանալուց հետո 28 օրվա ընթացքում փախստականների կամ մարդասիրական հիմքերով պաշտպանություն ստացած անձանց համար կազմվում է անհատական ինտեգրման պլան, որի շրջանակներում նրանց առաջարկվում են տարբեր ծառայություններ՝ մեկ տարվա կտրվածքով: Ինտեգրվող անձին կցվում է սոցիալական աշխատող, ով օգնում է պլանը իրականացնելու հարցերում, բացի այդ վերջինիս պարտականությունների մեջ է մտնում նաև պլանի պարբերաբար վերանայումը: Ինտեգրման պլանի մաս կազմող լեզվի ուսուցումը կազմակերպվում է անվճար միայն այն դեպքերում, եթե փախստականը աշխատանք չունի կամ նպաստառու է:

7)Ֆինլանդիայում ինտեգրման պլանը պարտադիր չէ, այն ստորագրվում է միայն այն դեպքում, երբ իմիգրանտը գրանցվում է սոցիալական օժանդակություն ստանալու համար: Այս դեպքում, ելնելով նրա կարիքներից, կազմվում է 18 շաբաթյա տևողությամբ պլան:

8) Իսպանիայում և Պորտուգալիայում աշխատանքային պայմանագիր կամ անչափահաս երեխա ունենալու դեպքերում իմիգրանտներին տրամադրվում են ինտեգրման բոլոր ծառայությունները: Բացի այդ, այս պետությունները իմիգրանտների համար օրենսդրորեն սահմանել են առողջապահական և հիմնական կրթության պարտադիր պահանջներ՝ անվճար սկզբունքով:

9) Արևելյան Ասիայի երկրներից հետաքրքիր է **Հարավային Կորեայի** օրինակը, որտեղ Կորեայի քաղաքացիների օտարերկրացի ամուսիններին առաջարկվում են ծառայություններ սոցիալական՝ կրթության և մշակույթի ոլորտներում, այդ թվում՝ լեզվական դասընթացներ: Կրթական արտոնություններ են նախատեսված իմիգրանտների երեխաների համար, իսկ փախստականներին իրավունք է տրվում ստանալ իրավաբանական և առողջապահական ծառայություններ և մասնակցել լեզվական դասընթացներին: Հատուկ մոտեցում է ցուցաբերվում Հս. Կորեայից ժամանած փախստականներին, որոնց տրամադրվում է ժամանակավոր կենտրոններում բնակվելու հնարավորություն, որտեղ նրանք ուսումնասիրում են Հր. Կորեայի պատմությունը, մշակույթը, ձեռք են բերում համակարգչային գրագիտություն, սովորում են խոհարարություն և այլն: Նման կենտրոններում նախապատրաստական դասընթացներ անցածները ստանում են

նաև կրթաթոշակ և աջակցություն բնակարանի ձեռք բերման հարցերում: Գործում է <<Ողջույն Կորեա>> ինտերնետային կայքը (www.hikorea.go.kr), որը օտարերկրացիներին բազմաբնույթ տեղեկություններ է տրամադրում Կորեայում իմիգրացիոն խնդիրների լուծման մասին:

10) ԱՊՀ երկրներից իմիգրանտների ինտեգրման համակարգ է ներդրված **Մոլդովայում,** ինչի համար հիմք է ծառայում <<Օտարերկրացիների ինտեգրման մասին>> 2012թ.–ին ընդունված օրենքը: Մոլդովայի ինտեգրացիոն քաղաքականության շրջանակներում իրականացվում են սոցիոմշակութային հարմարման, պետական լեզվի ուսուցման դասընթացներ, աշխատաշուկա մտնելու, ինչպես նաև առողջապահական և սոցիալական պաշտպանության համակարգերից օգտվելու պայմանների մասին տեղեկացում և խորհրդատվություն, մասնագիտական կողմնորոշման և տնտեսական ինտեգրման ուղղությամբ ծառայություններ: Իսկ օբյեկտիվ պատճառներով ինքնապահովման ցածր ներուժ ունեցող օտարերկրացիները (առանց ուղեկցման մնացած երեխաները, երեխաների հետ միայնակ ծնողները, խնամքի տակ երեք և ավելի երեխա ունեցող ընտանիքները, հաշմանդամները, կենսաթոշակային տարիքի մարդիկ), ինչպես և Մոլդովայի քաղաքացիները, օգտվում են հավասար և արդարացի օգնություն ստանալու իրավունքից: Փախստականներն ու քաղաքական ապաստան ստացածները օգտվում են ինտեգրման վերը նշված բոլոր միջոցառումներից:

64. Տարբեր երկրներում կիրառվող ինտեգրման ծրագրերի և անհատական պլանների վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ պլանների հիմնական բաղադիչներն են լեզվի ուսուցումը, քաղաքացիական կողմնորոշումը, աշխատանքային շուկա մուտք գործելու օժանդակությունը և ժամանակավոր բնակության համար կացարանով ապահովումը: Ընդ որում, օժանդակության վերջին տեսակը վերաբերում է իմիգրանտների խմբերից միայն փախստականներին:

Ինտեգրման ծրագրերի ֆինանսավորման մեխանիզմները

65.Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եվրոպական երկրներում իմիգրացիոն ծրագրերի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին, միևնույն ժամանակ ֆինանսական միջոցներ է հատկացնում նաև Եվրոպական Միությունը:

66.Օրինակ, Եվրոպական Միության համապատասխան հիմնադրամները ուղղակիորեն ֆինանսավորում են Իսպանիայի քաղաքացիական հասարակությունը ներկայացնող կազմակերպությունների՝ իմիգրանտների ինտեգրմանն ուղղված ծրագերը: Դանիայում ինտեգրմանն ուղղված միջոցառումների ֆինանսավորումը գործում է պետություն-տեղական իշխանություններ համաֆինանսավորման սկզբունքով: Պետությունը փոխհատուցում է իմիգրանտների ինտեգրման ուղղությամբ տեղական իշխանությունների կատարած ծախսերի 75%-ը, իսկ անչափահաս և սահմանափակ աշխատունակություն ունեցող իմիգրանտների համար՝ ամբողջությամբ:

67.Հոլանդիայում և Բելգիայում ինտեգրման միջոցառումների ֆինանսավորման համակարգի առանցքն են կազմում հատուկ հիմնադրամները: Բելգիայում այն գործում է 1991թ.-ից և կոչվում է Իմիգրացիոն քաղաքականության հիմանադրամ և զբաղվում է իմիգրացիոն քաղաքականության ծրագրերի ֆինասավորմամբ: Միևնույն ժամանակ ինտեգրացիոն ուղղվածության մի շարք ծրագրեր ֆինասավորվում են ԵՄ բյուջեից, այդ թվում՝ Բելգիա նոր ժամանած իմիգրանտների սոցիալ-մասնագիտական ինտեգրման միջոցառումները:

68.Ֆրանսիայում իմիգրանտների ինտեգրման համար պետական ֆինանսական միջոցների հատկացումը իրականացվում է երկու ձևաչափով՝ իմիգրանտների ինտեգրման ոլորտում գործող ոչ կառավարական կազմակերպություններին պետության կողմից տրվող դրամաշնորհների միջոցով և տարածքային և համայնքային իշխանությունների միջև բաշխման սկզբունքով՝ տեղական մակարդակում իմիգրանտների ինտեգրման միջոցառումներ իրականացնելու համար՝ կրկին տեղական հասարակական կազմակերպություններին դրամաշնորհներ տրամադրելու պայմանով:

IV. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԹԻՐԱԽ ԽՄԲԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ

69.Իմիգրանտների ինտեգրման միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օտարերկրացիների ինտեգրման հետ առնչվող խնդիրների լուծումը ենթադրում է տարբեր ուղղություններով մի շարք գործընթացների իրականացում: Ինտեգրումը, մասնավորապես ենթադրում է նրանց ցուցաբերվող աջակցություն հետևյալ հարցերում՝

1)ընդունող երկրի լեզվին տիրապետում,

2) ընդունող երկրի սոցիալ-մշակութային կյանքին ծանոթացում,

3)ընդունող երկրում ժամանակավոր կացարանով ապահովում,

4) ընդունող երկրի աշխատաշուկա մուտք գործում:

70.Վերը նշված ուղղություններով աջակցություն ստանալու անհրաժեշտությունը իմիգրանտների տարբեր խմբերի մոտ տարբեր ձևով է արտահայտված: Մի խմբի դեպքում կարող է սուր դրսևորվել կացարանի կարիքը, մինչդեռ մեկ այլ խմբի պարագայում՝ առաջնային դիտվի աջակցումը լեզվի տիրապետման հարցում:

71.Ինտեգրման թվարկված չորս ուղղություններից երեքի դեպքում Հայաստանում կիրառելի է միջազգային փորձից վերցված թիրախային մոտեցումը, ինչը ենթադրում է իմիգրանտների համար հայոց լեզվի տիրապետման, քաղաքացիական կողմնորոշման և ժամանակավոր կացարանով ապահվմանն ուղղված առանձին ծրագրերի մշակում և իրականացում: Ինտեգրման չորրորդ բաղադրիչը՝ աշխատաշուկա մուտք գործելու հարցերում աջակցության ցուցաբերումը, կարող է իրականացվել ներառական մոտեցմամբ, այսինքն նման կարիք ունեցող իմիգրանտները կուղղորդվեն դեպի արդեն իսկ գոյություն ունեցող համապատասխան ծրագրեր՝ դրանցում ներառվելու նպատակով: Սա միանգամայն հնարավոր տարբերակ է՝ հաշվի առնելով այն

հանգամանքը, որ ՀՀ օրենսդրությունը չի պարունակում այս մոտեցմանը խոչընդոտող դրույթներ:

72.Ինտեգրմանն ուղղված վերոհիշյալ գործընթացներն իրականացնելու նպատակով անհրաժեշտ է որոշակիացնել ինտեգրման հնարավոր օբյեկտները, այսինքն ՀՀ-ում բնակվող իմիգրանտների բոլոր խմբերից որոշակի չափանիշների կիրառմամբ ընտրել Հայաստանի Հանրապետությունում իմիգրանտների ինտեգրման առաջիկա տարիների քաղաքականության նպատակային խմբերը, ինչպես նաև նրանց ցուցաբերվելիք աջակցության տեսակները կամ ինտեգրման բաղադրիչները:

73.Վերջին հանգամանքը պարզելու համար կգնահատվի ՀՀ-ում բնակության իրավունք ունեցող օտարերկրացիների յուրաքանչյուր խմբի անձանց (կամ որ նույնն է՝ կացության կարգավիճակ ստանալու իրավունք տվող օրենքով սահմանված յուրաքանչյուր հիմքի) կարիքները ըստ ինտեգրման վերը նշված 4 բաղադրիչի/ աջակցության տեսակների:

74.Այս համատեքստում առանձնացող առաջին խումբը, <Փախստականների և ապաստանի մասին> ՀՀ օրենքի համաձայն, Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած և փախստական ճանաչված անձինք են: Այս անձանց հետ աշխատելու փորձը ցույց է տալիս, որ հակամարտության տարբեր գոտիներից (Իրաք, Սիրիա, Ուկրաինա և այլն) Հայաստանում ապաստան հայցող և փախստականի կարգավիճակ ստացած օտարերկրացիների մեծ մասն ունեն բավականին սուր արտահայտված կացարանի խնդիր: Ընդ որում, այս խնդիրն առկա է ինչպես այլազգի, այնպես էլ փախստական ճանաչված անձանց խմբում մեծամասնություն կազմող ազգությամբ հայերի համար: Իմիգրանտների այս խմբի համար կարևոր է նաև լեզվական խնդրի լուծումը, ինչն առավել արտահայտված է հատկապես այլազգի փախստականների և ավելի նվազ չափով՝ հայզագիների դեպքում: Լիարժեք ինտեգրման համար պակաս կարևոր չէ նաև քաղաքացիական կողմնորոշման դասընթացների անցկացումը, ինչը հնարավորություն կտա նրանց համակարգված գիտելիքներ ստանալ Հայաստանի պետության, նրա կառավարման համակարգի, մշակութային արժեքների ու սովորույթների և այլ հարցերի վերաբերյալ:

75.Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած և փախստական ճանաչված անձինք հանդիսանում են ինտեգրման քաղաքականության նպատակային հիմնական խմբերից մեկը: Նրանց ինտեգրման տեսանկյունից ամենակարևորը Հայաստանում ժամանակավոր բնակության համար կացարանի խնդրի լուծումն է, ինչպես նաև օժանդակությունը հայերեն լեզվի տիրապետման և քաղաքացիական կողմնորշման հարցերում:

76.ՀՀ-ում բնակվող իմիգրանտների մյուս խումբը Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ ստացած օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք են: <Օտարերկրյա քաղաքացիների մասին> ՀՀ օրենքի համաձայն՝ այդ անձինք ՀՀ-ում բնակվելու համար պետք է ունենան կացության հետևյալ 3 կարգավիճակներից մեկը՝ ժամանակավոր, մշտական, հատուկ:

77.Ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է յուրաքանչյուր օտարերկրացու, եթե նա հիմնավորում է, որ գոյություն ունեն Հայաստանի Հանրապետության տարածքում մեկ տարի և ավել ժամկետով իր բնակվելը հիմնավորող հետևյալ հանգամանքները՝

1) ուսումը, կամ

2) աշխատանքի թույլտվության առկայությունը կամ

3) Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը, ծնողը կամ զավակը լինելը կամ

4) Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ Հայաստանի Հանրապետությունում մշտական կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը կամ մերձավոր ազգականը (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) լինելը կամ

5) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը.

6) ազգությամբ հայ լինելը.

78.Մինչ թվարկված 6 հիմքերով ժամանակավոր կացության կարգավիճակ ստացող օտարերկրացիների կարիքների գնահատումը՝ ինտեգրման տարբեր բաղադրիչների նկատմամբ անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է մինչև մեկ տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ մեկ տարով երկարաձգելու հնարավորությամբ: Հետևաբար, որպես ինտեգրման քաղաքականության նպատակային խումբ պետք է դիտարկվեն ժամանակավոր կացության կարգավիճակ ստացած այն օտարերկրացիները, ովքեր առնվազն մեկ անգամ երկարաձգել են իրենց կացության կարգավիճակի ժամկետը:

79.Ուսում ստանալու հիմքով Հայաստանում բնակության իրավունք տվող ժամանակավոր կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիները չեն կարող դիտարկվել ինտեգրման աջակցության ցուցաբերման նպատակային խումբ, քանի որ Հայաստանում ուսում ստանալը նրանց ինքնակամ որոշումն է, որն ընդունելուց առաջ անձը պետք է գնահատի իր ունենալիք հնարավոր խնդիրները ուսումնառության երկրում (ուսման վարձեր, կացարան, լեզվական խնդիր և այլն) և դրանք լուծելու իր անձնական հնարավորությունները և որից հետո ընդունի որոշում: Վերը նշված պատճառաբանությամբ է բացատրվում այն հանգամանքը, որ ուսումնասիրված և ոչ մի երկրում ուսման հիմքով բնակություն հաստատած օտարերկրացիները չեն համարվել ինտեգրման նպատակային խումբ:

80.Նույն պատճառաբանությունը կիրառելի է նաև աշխատանքային գործունեություն ծավալելու հիմքով ՀՀ-ում բնակության իրավունք ձեռք բերող օտարերկրացիների համար: Դա հավասարապես վերաբերում է ինչպես աշխատանքի թույլտվության հիման վրա աշխատող օտարերկրացիներին (սպասվում է որ աշխատանքի թույլտվության տրամադրման ընթացակարգը առաջիկայում կսկսի գործել), այնպես էլ ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված կարգով աշխատողներին, ինչպես օրինակ ԵՏՄ անդամ պետությունների քաղաքացիները և նրանց ընտանիքների անդամները,ովքեր կարող են Հայաստանում բնակվել և աշխատել աշխատանքային պայմանագրի հիման վրա:

81.Այսինքն այս անձինք, եթե անգամ ՀՀ-ում բնակություն հաստատելուց հետո կարող են ունենալ ինտեգրման վերը նշված 4 բաղադրիչների նկատմամբ տարբեր սրությամբ արտահայտված կարիքներ, այնուհանդերձ այդ հարցերի լուծման պատասխանատվությունը կրում են իրենք: Նրանց դեպքում հնարավոր է նաև աջակցության տրամադրումը վճարովի հիմունքներով:

82.ՀՀ-ում օտարերկրացիներին ժամանակավոր կացության կարգավիճակի տրամադրման հաջորդ հիմքը ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ընտանիքի անդամ՝ ամուսինը, ծնողը կամ զավակը լինելն է: Իմիգրանտների այս խմբի մոտ ինտեգրման վերոհիշյալ բաղադրիչներից կարող են լինել միայն հայերեն լեզվի ուսուցման և քաղաքացիական կողմնորոշման դասընթացների միջին սրությամբ արտահայտված կարիքներ:

83.Ինտեգրման կարիքների տեսանկյունից իրավիճակը նույնն է Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ Հայաստանի Հանրապետությունում մշտական կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսին կամ մերձավոր ազգական (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) հանդիսանալու հիմքով ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակ ստացած օտարեկրյա քաղաքացիների մոտ:

84.Ինչ վերաբերում է ձեռնարկատիրական գործունեության հիմքով կացության ժամանակավոր կարգավիճակ ստացած օտարերկրյա քաղաքացիներին, ապա ակնհայտ է, որ նրանք չեն կարող համարվել պետության կողմից ինտեգրման 4 բաղադրիչներից որևէ մեկով աջակցություն ստացող նպատակային խումբ: Նմանատիպ խնդիրների առկայության դեպքում նրանք ի զորու կլինեն ինքնուրույն կերպով լուծել դրանք:

85.<Օտարերկրացիների մասին> ՀՀ օրենքով սահմանված վերջին հիմքը, որով օտարերկրացիները ՀՀ-ում կարող են ստանալ ժամանակավոր կացության կարգավաիճակ, ազգությամբ հայ լինելն է: Շփումները այս անձանց հետ թույլ են տալիս բավարար հիմնավորվածությամբ արձանագրելու, որ իմիգրանտների այս խմբի միայն առանձին անդամների մոտ կարող են լինել խիստ թույլ արտահայտված հայոց լեզվի տիրապետման և քաղաքացիական կողմնորոշման դասընթացների միջին սրությամբ արտահայտված կարիքներ:

86.Ամփոփելով ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների տարբեր խմբերի կարիքների վերլուծությունը ըստ ինտեգրման 4 բաղադրիչների՝ կարելի է արձանագրել, որ ինտեգրման քաղաքականության նպատակային խումբ կարող են համարվել.

1) Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը, ծնողները կամ զավակները,

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ Հայաստանի Հանրապետությունում մշտական կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը կամ մերձավոր ազգականները (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ),

3) ազգությամբ հայերը

Նշված խմբերի ինտեգրման կարիքները հանգում են լեզվական և քաղաքացիական կողմնորոշման խնդիրներին:

87.ՀՀ-ում բնակվելու համար անհրաժեշտ մյուս կարգավիճակը մշտական կացության կարգավիճակն է, որը տրվում է օտարերկրացուն, եթե նա՝

1) ապացուցում է Հայաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող ամուսնու կամ մերձավոր ազգականների (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) առկայությունը, Հայաստանի Հանրապետությունում ապահովված է բնակարանով ու գոյության միջոցներով և մինչև մշտական կացության կարգավիճակ ստանալու համար դիմում ներկայացնելն օրենքով սահմանված կարգով առնվազն երեք տարի բնակվել է Հայաստանի Հանրապետությունում կամ

2) ազգությամբ հայ է կամ Հայաստանի Հանրապետությունում իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն:

88.Մշտական կացության կարգավիճակ ստանալու համար օրենսդրությամբ սահմանված՝ վերը նշված առաջին հիմքով օտարերկրյա քաղաքացին Հայաստանում պետք է ունենա բնակարան և գոյության միջոցներ, ինչը վկայում է ինտեգրման համար կացարանի և զբաղվածության խնդիրների բացակայության մասին: Հաջորդ պայմանն այն է, որ անձը առնվազն երեք տարի բնակված լինի Հայաստանում, ինչը բավարար ժամանակահատված է ինչպես լեզվական, այնպես էլ կողմնորոշման խնդիրները հաղթահարելու համար (եթե այդպիսի խնդիրներ առկա են) : Այլ կերպ ասած, իմիգրանտների այս խմբի մոտ բացակայում է նաև լեզվական և քաղաքացիական կողմնորշման խնդիրները լուծելու անհրաժեշտությունը:

89.Ասվածը հավասարապես վերաբերում է նաև ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հիմքով ՀՀ-ում մշտական կացության կարգավիճակ ստացած անձանց:

90.Ինչ մնում է ազգությամբ հայ լինելու հիմքով ՀՀ-ում մշտական կացության կարգավիճակ ստացած օտաերկրացիներին, ապա նրանցից միայն որոշների մոտ կարող է լինել թույլ արտահայատված կարիք հայերեն լեզվի տիրապետման հարցում:

91.ՀՀ-ում բնակության նպատակով օտարերկրացիներին տրամադրվող հաջորդ կարգավիճակը հատուկ կացության կարգավիճակն է, որը տրվում է ազգությամբ հայ օտարերկրացիներին: Հատուկ կացության կարգավիճակ կարող է տրվել նաև Հայաստանի Հանրապետությունում տնտեսական կամ մշակութային գործունեություն ծավալող այլ օտարերկրացիների:

92.Վերջին 5 տարիների ընթացքում Հայաստանում կացության հատուկ կարգավիճակ են ստացել 15781 օտարերկրյա քաղաքացիներ, որոնց մոտ 68%-ը Իրանի, Սիրիայի և ԱՄՆ-ի քաղաքացիներ են: Իսկ 2016թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ-ում վավեր հատուկ կացության կարգավիճակ ունեն 8705 անձինք, որոնցից 53-ը այն ստացել են տնտեսական կամ մշակութային գործունեության, իսկ 8652-ը՝ ազգությամբ հայ լինելու հիմքերով:

93.Մեր դիտարկումների համաձայն ազգությամբ հայ լինելու հիմքով հատուկ կացության կարգավիճակ ստացած անձինք, որպես կանոն, ինքնաբավ են և ինտեգրման ինչ-ինչ խնդիրներ ունենալու պարագայում անգամ իրենք կարող են հոգալ այդ կարիքները: Ինչ վերաբերում է ՀՀ-ում տնտեսական կամ մշակութային գործունեություն ծավալելու հիմքով այդ կարգավիճակը ստացած օտարերկրացիներին, ապա նրանց փոքրաթիվ լինելու և ինտեգրման վերոհիշյալ 4 կարիքների ակնհայտ բացակայության պատճառով նրանք նույնպես չեն կարող համարվել որպես ինտեգրման նպատակային խումբ:

94.Այսպիսով, Հայաստանում բնակվող իմիգրանտների նշված խմբերից, հաշվի առնելով նրանց խնդիրների լուծման անհետաձգելիությունը՝ մի կողմից, և դրանց լուծման համար առկա հնարավորությունները՝ մյուս կողմից, Հայաստանում իմիգրանտների ինտեգրման կարճաժամկետ քաղաքականության առաջնային թիրախ խմբեր կարող են համարվել՝

1) Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած և փախստական ճանաչված անձինք - այս խմբի ինտեգրումը ներառելու է ժամանակավոր կացարանով ապահովումը, լեզվական և քաղաքացիական կողմնորոշման դասընթացները,

2) Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը, ծնողները կամ զավակները – այս անձանց անհրաժեշտ կլինի տրամադրել հայերեն լեզվի ուսուցման և քաղաքացիական կողմնորշման դասընթացներ,

3) Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ Հայաստանի Հանրապետությունում մշտական կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը կամ մերձավոր ազգականները (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) - այս խումբը ևս կարիք ունի հայերեն լեզվի ուսուցման և քաղաքացիական կողմնորշման դասընթացների,

4) ազգությամբ հայ լինելու հիմքով Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիները- այս խմբին պատկանող որոշ անձանց համար անհրաժեշտ կլինեն լեզվական և քաղաքացիական կողմնորշման դասընթացներ,

5) ազգությամբ հայ լինելու հիմքով ՀՀ-ում մշտական կացության կարգավիճակ ստացած անձինք - այս խմբին պատկանող որոշ անձանց համար նույնպես անհրաժեշտ կլինեն լեզվական և քաղաքացիական կողմնորշման դասընթացներ:

V. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

95.Իմիգրանտների ընտրված խմբերի ինտեգրման նպատակով սույն Հայեցակարգով նախատեսվում է իրականացնել հետևյալ գործողությունները՝

1) Հայերեն լեզվի ուսուցման դասընթացի կազմակերպում

2) Քաղաքացիական կողմնորոշման դասընթացի կազմակերպում

3) Ժամանակավոր կացարանի տրամադրում:

96.Այս դասընթացի շահառուներն են լինելու՝

1) ՀՀ-ում ապաստան ստացած և փախստական ճանչված չափահաս անձինք (հիմնականում ոչ հայազգի, անհրաժեշտության դեպքում՝ նաև լեզվին վատ տիրապետող հայազգի փախստականները);

2) ՀՀ-ում ապաստան ստացած և փախստական ճանչված անձանց դպրոցահասակ երեխաները;

3) ՀՀ-ում ժամանակավոր և մշտական կացության կարգավիճակ ստացած անձինք:

97.Հայերեն լեզվի ուսուցման դասընթացի կազմակերպման ապահովումն իրականացվելու է հետևյալ մեխանիզմներով՝

1)Հայերեն լեզվի ուսուցման դասընթացի ծրագրի մշակում

2)Շահառուների ուղղորդում

3) Հայերեն լեզվի ուսուցման անվճար դասընթացի իրականացման ապահովում

Հայերեն լեզվի ուսուցման դասընթացի ծրագրի մշակում

98. Դասընթացների անցկացման ծրագրերը մշակվելու են շահառու խմբերից յուրաքանչյուրի համար, մասնավորապես.

1)ՀՀ-ում ապաստան ստացած և փախստական ճանչված չափահաս անձինք: Նրանց համար նախատեսվող դասընթացները կազմված են լինենու երկու մասից՝

ա.հիմնական մաս՝ մինչև 60 ժամ տևողությամբ, որն իրականացվելու է անվճար,

բ.լրացուցիչ վճարովի մաս՝ մինչև 120 ժամ, որի շրջանակներում ունկնդիրների ցանկությամբ իրականացվելու է հայերենի խորացված ուսուցում:

2)ՀՀ-ում ապաստան ստացած և փախստական ճանչված անձանց դպրոցահասակ երեխաներ: Նրանց ուսուցմանն ուղղված դասընթացները անցկացվելու են հանրակրթական դպրոցներում, անվճար և մինչև 100 ժամ տևողությամբ:

3)ՀՀ-ում ժամանակավոր և մշտական կացության կարգավիճակ ստացած անձինք: Նրանց մասնակցությունը դասընթացներին լինելու է կամավոր և վճարովի հիմունքներով:

99.Դասընթացների անցկացման ծրագիրը մշակելու է Հայաստանի Հանրապետության կրթության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը:

Շահառուների ուղղորդում

100.Շահառուների ուղղորդումը կատարելու են օտարերկրյա քաղաքացիների հետ գործառույթներ իրականացնող ՀՀ պատկան մարմինները՝ ցանկություն հայտնած անձանց ուղղորդելով դեպի հայերեն լեզվի ուսուցման ծրագրեր իրականացնող մարմին:

Հայերեն լեզվի ուսուցման անվճար դասընթացի իրականացման ապահովում

101.Հայերեն լեզվի ուսուցման անվճար դասընթացն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության կրթության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի կողմից տվյալ բյուջետային տարում իրականացվող ծախսային ծրագրերի ցանկում իմիգրանտների համար նախատեսված հայոց լեզվի ուսուցման դասընթացի ծրագիրը ներառելու միջոցով:

Հայերեն լեզվի ուսուցման անվճար դասընթացի իրականացման ֆինանսական գնահատականը

102.Հայերեն լեզվի ուսուցման անվճար դասընթացի իրականացման ֆինանսական գնահատականը ներառում է հետևյալը՝

1) Դասընթացի անցկացման ծրագրի մշակում -0 դրամ

2)Շահառուների ուղղորդում -0 դրամ

3)Հայերեն լեզվի ուսուցման դասընթացի իրականացման ապահովում- Դասընթացն անվճար է լինելու միայն ՀՀ-ում ապաստան ստացած և փախստական ճանչված անձանց համար: ՀՀ-ում տարեկան միջին հաշվով ապաստան է հայցում 300 օտարերկրացի, նրանցից փախստական են ճանաչվում մոտ կեսը՝ 150 հոգի: Վերջիններիս ճնշող մեծամասնությունը՝ մոտ 100-ը ազգությամբ հայեր են, իսկ մնացած 50-ը այլազգիներ: Հայազգիների մեծ մասը լեզվական խնդիրներ չունեն: Հայերեն լեզվի ուսուցման դասընթացների կարիք ունեցող ՀՀ-ում ապաստան ստացած և փախստական ճանչված անձանց տարեկան միջին թիվը կկազմի 80 անձ (50 այլազգիներ+30ազգությամբ հայեր): Նրանց համար նախատեսվում է իրականացնել պարտադիր անվճար ուսուցում մինչև 60 ժամ տևողությամբ: Մեկ անձի ուսուցման համար պահանջվող գումարը միջինում կազմում է 30.000 դրամ: **Այսպիսով դասընթացի կազմակերպման համար պահանջվող տարեկան ընդհանուր գումարը կկազմի 2.400000 դրամ (30.000 x 80):**

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

103. Այս դասընթացի շահառուներն են լինելու՝

1) ՀՀ-ում ապաստան ստացած և փախստական ճանչված անձինք (հիմնականում ոչ հայազգի, անհրաժեշտության դեպքում՝ նաև հայազգի),

2)ՀՀ-ում ժամանակավոր և մշտական կացության կարգավիճակ ստացած անձինք

104.Քաղաքացիական կողմնորոշման դասընթացի կազմակերպման ապահովումն իրականացվելու է հետևյալ մեխանիզմներով՝

1)Դասընթացի անցկացման ծրագրի մշակում

2)Շահառուների ուղղորդում

3)Քաղաքացիական կողմնորոշման դասընթացի իրականացման ապահովում

Դասընթացի անցկացման ծրագրի մշակում

105.Դասընթացը կազմված է լինելու հետևյալ մասերից՝

1)իրավական մաս, որի միջոցով ունկնդիրներն իրազեկվելու են ՀՀ սահմանադրական կարգի, պետաիրավական, քաղաքական համակարգի, մարդու և, մասնավորապես, փախստականների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ ազգային օրենսդրությանը;

2)մշակութային մաս, որի միջոցով ունկնդիրները ծանոթանալու են մեր հասարակությունում ընդունված արժեքներին, սովորույթներին և վարքագծի կանոններին,

3)ուղղորդման մաս, որի միջոցով ունկնդիրները ծանոթանալու են երկրում առկա և իրենց համար հասանելի զբաղվածության օժանդակության, կրթական, առողջապահական, սոցիալական ծրագրերին:

106.Դասընթացի տևողությունը կազմելու է մինչև 30 ժամ: ՀՀ-ում ապաստան ստացած և փախստական ճանչված անձանց համար այն կազմակերպվելու է անվճար, իսկ ՀՀ-ում ժամանակավոր և մշտական կացության կարգավիճակ ստացած անձանց համար՝ նրանց ցանկության առկայության դեպքում՝ վճարովի հիմունքներով:

107.Դասընթացների անցկացման ծրագիրը մշակելու է Հայաստանի Հանրապետության միգրացիայի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը ՀՀ համապատասխան պետական մարմինների հետ համագործակցությամբ:

Շահառուների ուղղորդում

108.Շահառուների ուղղորդումը կատարելու են օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետ գործառույթներ իրականացնող ՀՀ պատկան մարմինները՝ ցանկություն հայտնած անձանց ուղղորդելով դեպի քաղաքացիական կողմնորոշման դասընթաց իրականացնող մարմին:

Քաղաքացիական կողմնորոշման դասընթացի իրականացման ապահովում

109.Քաղաքացիական կողմնորոշման դասընթացն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության միգրացիայի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի կողմից տվյալ բյուջետային տարում իրականացվող

ծախսային ծրագրերի ցանկում իմիգրանտների համար նախատեսված քաղաքացիական կողմնորոշման դասընթացի ծրագիրը ներառելու միջոցով:

Քաղաքացիական կողմնորոշման անվճար դասընթացի իրականացման ֆինանսական գնահատականը

110.Քաղաքացիական կողմնորոշման անվճար դասընթացի իրականացման ֆինանսական գնահատականը ներառում է հետևյալը՝

1) Դասընթացի անցկացման ծրագրի մշակում -0 դրամ

2)Շահառուների ուղղորդում -0 դրամ

3)Քաղաքացիական կողմնորոշման դասընթացի իրականացման ապահովում- Դասընթացն անվճար է լինելու միայն ՀՀ-ում ապաստան ստացած և փախստական ճանաչված անձանց համար: ՀՀ-ում տարեկան միջին հաշվով ապաստան է հայցում 300 օտարերկրացի, նրանցից փախստական են ճանաչվում կեսը՝ մոտ 150 հոգի որոնք բոլորն են կարիք ունեն քաղաքացիական կողմնորոշման դասընթացների: Դասընթացի տևողությունը կազմելու է 30 ժամ: Մեկ անձի ուսուցման համար պահանջվող գումարը միջինում կազմում է 15.000 դրամ: **Այսպիսով դասընթացի կազմակերպման համար պահանջվող տարեկան ընդհանուր գումարը կկազմի 2.250000 դրամ (15.000 x 150):**

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑԱՐԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

111.Ժամանակավոր կացարան տրամադրվելու է միայն ՀՀ-ում ապաստան ստացած և փախստական ճանչված անձանց՝ անհրաժեշտության դեպքում: Ժամանակավոր կացարանի տրամադրման ապահովումն իրականացվելու է հետևյալ մեխանիզմներով ՝

1)Շահառուների ընտրություն

2)Ժամանակավոր կացարանի տրամադրման ապահովում

Շահառուների ընտրություն

112.Շահառուների ընտրության նպատակով մշակվելու են կարիքների գնահատման չափանիշներ, որոնց միջոցով գնահատվելու է ժամանակավոր կացարանի կարիքի առկայությունը ՀՀ-ում ապաստան ստացած և փախստական ճանչված անձանց մոտ:

113.Կարիքների գնահատման չափանիշները մշակելու և գնահատումն իրականացնելու է Հայաստանի Հանրապետության միգրացիայի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը:

Ժամանակավոր կացարանի տրամադրման ապահովում

114. Ժամանակավոր կացարանի տրամադրման խնդիրը կարող է լուծվել հետևյալ ուղիներով՝

1)Միջազգային կազմակերպությունների միջոցներով կառուցված և միգրացիայի հարցերով լիազորված պետական կառավարման մարմնի տնօրինության տակ գտնվող սոցիալական տներում փախստական ճանաչված անձանց տեղավորելու միջոցով: Այդպիսիք գոյություն ունեն 3 հասցեներում՝ Արարատի մարզի Դարբնիկ համայնք (46 բնակարաններ),Նոր Նորքի Մոլդովական 70 շենքի 3-րդ հարկ (13 բնակարաններ) և նույն հասցեի 1-ին հարկ (11բնակարաններ),

2)Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործող սոցիալական տներում փախստական ճանաչված անձանց տեղավորելու միջոցով,

3)ՀՀ-ում ապաստան ստացած և փախստական ճանաչված անձանց մինչև 9 ամիս տևողությամբ բնակարաններ վարձակալելու համար սուբսիդիայի տրամադրման միջոցով: Այդպիսի ծրագիր ներկայումս իրականացվում է ՄԱԿ ՓԳՀ-ի միջոցով և Սիրիայից ներգաղթած յուրաքանչյուր շահառու ընտանիքի տրամադրվում է գումար բնակարանի վարձակալության համար: Առաջարկվում է տրամադրել սուբսիդավորում 60.000 դրամի չափով և մինչև 9 ամիս տևողությամբ: Այդ նպատակով միգրացիայի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի կողմից տվյալ բյուջետային տարում իրականացվող ծախսային ծրագրերի ցանկում կներառվի Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած և փախստական ճանաչված անձանց համար վարձակալությամբ բնակարանների ձեռք բերման համար սուբսիդավորում ծախսային ծրագիրը:

Ժամանակավոր կացարանի տրամադրման իրականացման ֆինանսական գնահատականը

115.Ժամանակավոր կացարանի տրամադրման իրականացման ֆինանսական գնահատականը ներառում է հետևյալը՝

1)Շահառուների ընտրություն -0 դրամ

2)Ժամանակավոր կացարանի տրամադրման իրականացման ապահովում-

ՀՀ-ում տարեկան միջին հաշվով փախստական են ճանաչվում և ապաստան են ստանում 50-60 ընտանիքներ (շուրջ 150 հոգի): Իրատեսական է նշված թվաքանակի ընտանիքների կեսի տեղավորումը սոցիալական տներում: **Մնացած 25-30 ընտանքիների համար բնակարանների վարձակալության սուբսիդավորման համար տարեկան անհրաժեշտ կլինի 13.5 մլն դրամ (25 x 60.000 x 9):**

116. Ի դեպ, <<Փախստականների և ապաստանի մասին> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին> վերջերս ընդունված ՀՀ օրենքում նմանատիպ (բնակարանների վարձավճարների սուբսիդավորման) մոտեցում է նախատեսված այն ապաստան հայցողների համար, որոնց հնարավոր չի եղել ապահովել կացարանով:

ԱՄՓՈՓ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

117.Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած, ինչպես նաև երկարաժամկետ միգրանտների ինտեգրման քաղաքականության հայեցակարգը լրացնում է ՀՀ միգրացիոն քաղաքականության մեջ առկա բացը՝ սահմանելով իմիգրանտների թիրախ խմբերը և նրանց ինտեգրման հնարավոր ուղղությունները՝ այս ոլորտում առկա միջազգային լավագույն փորձի հաշվառմամբ:

118.Հայաստանում բնակվող իմիգրանտների խմբերից, հաշվի առնելով նրանց խնդիրների լուծման անհետաձգելիությունը՝ մի կողմից, և դրանց լուծման համար առկա հնարավորությունները՝ մյուս կողմից, Հայաստանում իմիգրանտների ինտեգրման կարճաժամկետ քաղաքականության առաջնային թիրախ խմբեր են ճանաչվել՝

1)Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած և փախստական ճանաչված անձինք - այս խմբի ինտեգրումը ներառելու է ժամանակավոր կացարանով ապահովումը, լեզվական և քաղաքացիական կողմնորշման դասընթացները,

2)Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը, ծնողները կամ զավակները – այս անձանց անհրաժեշտ կլինի տրամադրել հայերեն լեզվի ուսուցման և քաղաքացիական կողմնորշման դասընթացներ,

3)Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ Հայաստանի Հանրապետությունում մշտական կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը կամ մերձավոր ազգականները (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) - այս խումբը ևս կարիք ունի հայերեն լեզվի ուսուցման և քաղաքացիական կողմնորշման դասընթացների,

4) ազգությամբ հայ լինելու հիմքով Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիները- այս խմբին պատկանող որոշ անձանց համար անհրաժեշտ կլինեն լեզվական և քաղաքացիական կողմնորշման դասընթացներ,

5)ազգությամբ հայ լինելու հիմքով ՀՀ-ում մշտական կացության կարգավիճակ ստացած անձինք - այս խմբին պատկանող որոշ անձանց համար նույնպես անհրաժեշտ կլինեն լեզվական և քաղաքացիական կողմնորշման դասընթացներ:

119.Իմիգրանտների ընտրված խմբերի ինտեգրման նպատակով ստորև նշված գործողությունների իրականացման համար տարեկան կպահանջվի՝

1)հայերեն լեզվի ուսուցման դասընթացի կազմակերպում - 2.400000 դրամ,

2) քաղաքացիական կողմնորոշման դասընթացի կազմակերպում- 2.250000 դրամ,

3)ժամանակավոր կացարանի տրամադրում -13.5 մլն դրամ: